Հայոց գերխնդիրը

Սամվել
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Բանաստեղծ

Ադրբեջանը խորհրդային կայսրության փոքրիկ պատճենն էր՝ կեղծ ինտերնացիոնալիզմի դրոշի տակ հավաքած բազում ազգեր ու ազգություններ: Բոլշևիզմն էր ծնել այդ նորօրյա խառնակ Բաբելոնը, որն ուզում էր կլլել իր կոկորդին դեմ առած ամենամեծ ու համեղ պատառը՝ Արցախը, որի ազգային-ազատագրական պայքարի բոցը բռնկվեց իր մշակույթի, հայրենիքի, կրոնի ու պատմության բռնի և անարդար թուրքացման ու նրա ստեղծած քաղաքականությունը սեփականացնելու պատճառով: Բոլշևիզմի կարմիր կաթը ծծած Ադրբեջանի քաղաքական ղոչիները սոսկ քաղաքական այրերի փողկապներ կապած կարմիր մոլլաներ են եղել և՝ են: 70 տարի դանդաղ, բայց հեռահար նպատակների երազով տարված, նրանք արել են ամեն ինչ, որպեսզի հայաթափվի կամ լրիվ մահմեդականացվի Արցախը: Նայեք Ադրբեջանի քարտեզին, Արցախի հենց շուրջ, տասնամյակների ընթացքում կառուցվել են բազում մեծ ու փոքր քաղաքներ, որպեսզի արհեստավարժ արցախցին մի «կտոր հացի» համար գնա օտարի համար քաղաքներ ու գործարաններ ստեղծի, շենացնի, իսկ աշխարհից կտրված իր ծննդավայրը թողնի որպես հանրային հոտերի արոտավայր: Ուշադիր նայեք՝ ինչպես են անջրպետել արցախահայությունը Հայաստանից:

Հմտորեն հյուսած աշխարհաքաղաքական շրջափակման ցանցի մեջ է եղել այդ հայեցի շեն ու հարուստ ոստանը 70 տարի շնչահեղձ, բռնակալության ճիրաններում, շուրթերն ու բռունցքները զսպած: Արցախահայության ցավին անտեղյակ էր երկիրը, աշխարհը: Մեծ ժամանակ ու ջանքեր էին պետք, որպեսզի նրա արդար պահանջը չդիտվի որպես հողային տարածքների զավթման պայքար: Մեր ցավը նաև կայանում է նրանում, որ մեզ լսող ու դատող, մեր դատը վճռող մեծամեծերը ներկայացնում էին այն ցեղերին, որոնց պատմությունը այլոց հայրենիքներ նվաճելու, ամեն ինչի գնով զավթելու, ընդարձակելու, տաք ու սառը ջրեր դուրս գալու, հովիտներ, լեռներ ու արոտավայրեր ճանկելու բարբարոսի պատմություն է:

Դրա համար էլ մեզ չէր հասկանում ու չի հասկանում նրա սառն ու գիշատիչ ոգին:

Մենք չորս անընդմեջ տարիներ տեսանք, թե հայի արդար ճակատը ինչպես է զարկվում պլավոնա-թուրանական տմարդի անտարբերության սառցապատին: Մարդկային պատմության մեջ ամենամեծ կայսրության բռնության դեմ էր փոքրիկ արցախահայության ազատաբաղձ կոինչը, որից երկիրը երերաց, արթնացավ կիսով չափ զայրույթով, կիսով չափ հույսով: Արևելյան Եվրոպան և Մոնղոլիան լքող կայսրության բանակը պետք է, որ քաղաքական հզոր ցնցումների հրաբուխը խեղդեր ու հանգցներ, նաև՝ հայաթափ աներ Արցախը: Ու նա սկսեց իր սև գործը: Արցախի Գարդմանի գավառի մոտ 50 գյուղ լրիվ հայաթափվեց (Գետաշենից մինչև Արծվաշեն): Հայաթափվեցին Ղարաբաղի 24 գյուղերը: Կայսրության փլուզումից հետո հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ միավորելով Արցախ աշխարհի Ղարաբաղի և Շահումյանի շրջանները:

Էն գլխից ու նախ տրանից մենք պետք է սկսեինք: Միացումը նախ սա պիտի լիներ: Մասնեմաս արած Արցախի միացում, նոր միայն նրա միացումը Հայաստանին: Արցախահայության աշխարհաքաղաքական յոթանասնամյա շրջափակմանը հաջորդեց ռազմատնտեսական շրջափակումը:

Չորս տարի մահու և կենաց պայքար է գնում, բռնության մեջ ամեն ինչ օժտված է գոյապահպանման և ինքնապաշտպանության առողջ բնազդով: Տիեզերքի սուրբ գաղտնիքներից մեկն է սա: Մեր ցեղը, որ բռնակալներ շատ է տեսել, այս մեկին պիտի «հասկացնի», որ հայրենիք չեն գողանում, մշակույթ չեն գողանում, արարում են: Դրա համար էլ տիեզերքի սուրբ կրակը միշտ թափվում է բոլոր նրանց գլխին, ովքեր հայրենիք են հափշտակում: Արցախից Հայաստան՝ Շուշի—Լաչին—Գորիս բացվող ճանապարհը, սոսկ ճանապարհ չէ, այն հույսի թև է երկարած, Մոր թև, Որդու թև, մենք շրջապատված ենք... Բայց սպասեք, չէ՞ որ ինչպես մենք ենք շրջապատված մահմեդական երկրներով, այնպես էլ Թուրքիան է շրջապատված քրիստոնյա երկրներով: Նա թող չհոխորտա: Նրա հետ աշխարհի խոսակցությունը դեռ չի ավարտվել:

Դարավոր կարոտների, սպասումների հրամայականը մեզ հուշում է, որ Մայրը Որդուն գրկում է ոչ թե մեկ թևով, այլ երկու: Երկրորդ թևը պետք է լինի Սեվան—Վարդենիս—Արցախ երկաթուղային գիծը: Այսպես մենք կփրկենք միմյանց ու մեզ: Արևմտյան տերություններից ոչ մեկը բարոյական իրավունք չունի հայ ժողովրդի գլխին խաղաղության և մարդասիրության քարոզ կարդալու: Մենք, որ հազարամյա փորձությունների ու բոցերի միջով կրել ենք Խաչն Արևելքի, ի խորոց սրտի հառաչելով և ողողանջելով «խաղաղություն ամենեցուն», մենք պետք է մաքրենք մեզնից անդուշնության ամեն մի հուշ, միասնական ու միակամ ելնել նոր պահանջի, չեղյալ հայտարարելու Լենին—Աթաթյուրք պայմանագիրը, այն, ինչ չարեցինք արցախյան շարժման Արշալույսին: Այսօր դա պետք է լինի մեր քաղաքագետների ու բոլոր կուսակցությունների գերխնդիրը: Արևմուտքի, քրիստոնեական ժպիտը միշտ շուրթերին արևմուտքի աչքի առջև ու նրանց «օգնությամբ» ծվատել են մեր հայրենիքը, և այսօր, երբ կարծես այդ դասերը քիչ էին, մենք դարձյալ ուզում ենք նրանց խղճին ապավինել: Մոռանալով, որ մեզ ու մեր սրին ապավինելով է, որ էլի հասել ու հասնում ենք ինչ-որ բանի (Սարդարապատ, Շուշի, Լաչին, Սադարակ...):

Հայոց գերխնդիրը բոլոր ժամանակներում եղել է ու մնում է մեկը՝ որքան եղունգդ բռնում է՝ պետք է մեզնից խլվածը մեզ վերադարձնել: Ռուսաստանը և Իրանը միշտ էլ դեմ են լինելու «Մեծ թուրան» գաղափարզառանցանքին: Այդ գաղափարի ողնաշարի մեջ պիտի հավերժ խրված մնա Հայկական Սեպը: Որքան մենք ուժ ու միակամություն ենք ցուցանում, այնքան նրանց և մեր աշխարհաքաղաքական շահերը և ճակատագիրը խաչվում են:

Հավատանք իրար: